



Կոմիտեի նախագահ՝

X



Մհեր Աբրահամյան

Signed by: Mher Abrahamyan

«Այդի Բանկ» ՓԲԸ Ակտիվների և
պարտավորությունների կոմիտե2025 թվականի մայիսի 15-ի N 05-
110 արձանագրությամբ**Այդի Բանկի հաշվարկային տոկոսադրույք (ԱԲՀՏ)**

Ուժի մեջ է մտնում 01/07/25թ

Արժույթ	ԱԲՀՏ	Ուժի մեջ է մինչև
ՀՀ դրամ	9.3%	01/01/26
ԱՄՆ դոլար	3.9%	01/01/26
Եվրո	2%	01/01/26

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**«Այդի Բանկ» ՓԲԸ-ի կողմից լողացող տոկոսադրույքների սահմանման համար հիմք հանդիսացող
հաշվարկային տոկոսադրույքի սահմանման****Գլուխ 1. Նպատակը**

1. Սույն մեթոդաբանության նպատակն է սահմանել «Այդի Բանկի հաշվարկային տոկոսադրույքի» (այսուհետ՝ ԱԲՀՏ) հաշվարկման կարգը, որի կիրառումը հնարավորություն կտա հաճախորդներին տրամադրելու երկարաժամկետ վարկային միջոցներ և միևնույն ժամանակ զսպելու Բանկի ակտիվների և պարտավորությունների ժամկետային ռիսկը՝ պայմանավորված տոկոսադրույքների հնարավոր փոփոխությամբ:

Գլուխ 2. ԱԲՀՏ-ի հաշվարկման կարգը և բաղադրիչները ըստ արժույթների

2. ԱԲՀՏ-ի հիման վրա կարող են սահմանվել Բանկի սեփական ռեսուրսներով ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և Եվրոյով տրամադրվող վարկերի համար հիմնական տոկոսադրույքներ:

3. ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և Եվրոյով տրամադրվող վարկերի համար **ԱԲՀՏ հաշվարկման հիմքում ընկած է ՄԿՏ-ն.**

Որտեղ՝

- **ՄԿՏ** – ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակվող առևտրային բանկերի կողմից ֆիզիկական անձանցից ներգրավված մեկից հինգ տարի ժամկետով ավանդների **Միջին Կշռված Տոկոսադրույքն** է համապատասխան արժույթի համար՝ կլորացնելով ստորակետից հետո մինչև 1 /մեկ/ թվի ճշտությամբ:
Միջին Կշռված Տոկոսադրույքը հրապարակվում է ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական կայքում, **«Դրամավարկային և Ֆինանսական վիճակագրություն»** բաժնում
(<https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>):

4. Սույն մեթոդաբանության հիմա վրա ԱԲՀՏ-ն առաջին անգամ հրապարակելիս, ինչպես նաև 5-րդ կետի պայմանին համապատասխան յուրաքանչյուր անգամ ԱԲՀՏ-ն փոփոխելու դեպքում $ԱԲՀՏ = ՄԿՏ$:

Գլուխ 3. ԱԲՀՏ-ի սահմանումը և կիրառումը

5. ԱԲՀՏ-ն Բանկի կողմից սահմանվում է տարեկան երկու անգամ՝ մայիս և նոյեմբեր ամիսներին՝ հիմք ընդունելով ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված տվյալ ամսվան նախորդող ամենաթարմ համապատասխան տոկոսադրույքները:
6. ԱԲՀՏ-ն փոփոխվում է այն դեպքում, երբ 4-րդ կետով սահմանված ժամանակահատվածների համար հերթական հրապարակված ՄԿՏ-ն Բանկի կողմից վերջին հրապարակված ԱԲՀՏ-ի համեմատ փոփոխվում է 1% և ավելի տոկոսային կետով՝ ՀՀ դրամի համար ու 0.5% և ավելի տոկոսային կետով՝ ԱՄՆ դոլարի և Եվրոյի համար:
7. ՀՀ Կենտրոնական բանկի կողմից առևտրային բանկերի կողմից ֆիզիկական անձանցից ներգրավված «մեկից հինգ տարի» ժամկետով ավանդների միջին կշռված տոկոսադրույքը 6 ամսվա ընթացքում չհրապարակելու դեպքում ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով և Եվրոյով տրամադրվող վարկերի համար ԱԲՀՏ-ի հաշվարկը կկատարվի հետևյալ կերպ.

$$\text{ԱԲՀՏ} = \text{ՄԿՏ}^* + \text{Ճշգրտող գործակից}$$

- Որտեղ՝
- **ՄԿՏ*** – ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակվող առևտրային բանկերի կողմից ֆիզիկական անձանցից ներգրավված «181 օրից մինչև 1 տարի» ժամկետով ավանդների միջին կշռված տոկոսադրույքն է համապատասխան արժույթի համար՝ կլորացնելով ստորակետից հետո մինչև 1 /մեկ/ թվի ճշտությամբ:
«ՄԿՏ*» հրապարակվում է Կենտրոնական բանկի պաշտոնական կայքի **«Դրամավարկային և Ֆինանսական վիճակագրություն» բաժնում**
(<https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>)
 - **Ճշգրտող գործակից** – այլընտրանքային լողացող տոկոսադրույքի անցնելու պահին նախորդող ժամանակահատվածի դրությամբ « $\text{ՄԿՏ}_{n-m} - \text{ՄԿՏ}_n^*$ » մեծություն, **որտեղ՝**
 - ✓ **n-ը**՝ այլընտրանքային լողացող տոկոսադրույքի անցնելու պահին է,
 - ✓ **m-ը**՝ այլընտրանքային լողացող տոկոսադրույքի անցնելու պահին նախորդող ժամանակահատվածն է, որի ժամանակ հրապարակվել են վերոնշյալ տոկոսադրույքները,
 - Ի դեպ Ճշգրտող գործակիցը հաշվարկվում է միայն այլընտրանքային լողացող տոկոսադրույքին անցնելու պահին և ֆիքսվում որպես հաստատուն մեծություն՝ այլընտրանքային լողացող տոկոսադրույքի կիրառման ընթացքում:
8. Սույն մեթոդաբանությունը գործում է այն վարկերի և լողացող տոկոսադրույքով տրամադրվող այլ վարկային գործիքների համար, որոնք հաստատվել են 15/07/2022թ-ից հետո:

